ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-86/25 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք.Ապարան 06.10.2025թ.
Ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Արկադի Կարապետյան-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ(ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝
Իդա Թադևոսյան-աշխատակազմի քարտուղար (ԳԱ)
Արգիշտի Միսակյան - ծրագրերի բաժնի պետի Ժ/պ(ԳԱ)
Սևակ Մարտիրոսյան- ցանցային ադմինիստրատոր(ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝
Մարիամ Հայրապետյան

1. Տեղեկատվություն՝ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-86/25 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.1 ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-86/25 ծածկագրով ընթացակարգի հաղթող մասնակից <<ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի՝ 26.09.2025թվականին Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղղված գրության վերաբերյալ որոշում ընդունելու մասին:
1.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի օրը ժամը և վայրը հաստատելու մասին:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.Տեղեկատվություն՝ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-86/25 ծածկագրով ընթացակարգի արտահերթ նիստ հրավիրելու և հաղթող մասնակից <<ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի՝ 26.09.2025թվականին Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղղված գրության վերաբերյալ որոշում ընդունելու մասին

2.1. Ընդունել ի գիտություն, որ արտահերթ նիստի հրավիրելու համար հիմք է հանդիսացել գնահատող հանձնաժողովի անդամների 02.10.2025 թվականի գրավոր պահանջը ՝հիմք ընդունելով <<ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի 26.09.2025թվականին Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղղված գրությունը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետը:
2.2 Ընդունել ի գիտություն, որ <<ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի կողմից 26.09.2025թվականին Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղղարկվել է գրություն հետևյալ բովանդակությամբ.

« **Հարգելի պարոն Եղիազարյան.**

Հայտնում ենք Ձեզ ,որ Ապարանի համայնքապետարանի կողմից 18.09.2025թ «ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ » ՍՊԸ-ին ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-86/25 ծածկագրով մրցույթի պայմանագիրը ծանուցվելուց հետո մեր կազմակերպության աշխատակիցների կողմից տվյալ խաչմերուկում ուսունասիրություն կատարելուց հետո պարզ է դարձել, որ Ձեր կողմից հրապարակված հրավերի տեխնիկակն բնութագրում կան անհամապատասխանություններ, մասնավորապես (գլխավոր 4 լուսատախտակները ունենա լրացուցիչ սեկցիա մեկընդմերթ թարթող աջ սլաք՝ զիջիր ճանապարհը նշանով՝ 8 հատ) տվյալ խաչմերուկը միայն մեկ ուղությամբ ունի համընթաց երթևեկության 3 գոտի, իսկ մնացած 3 ուղղությամբ 1 համընթաց երթևեկության գոտի:
Ըստ ՀՀ Կառավարության 26 հոկտեմբերի 2006 թվականի N 1699-Ն որոշման (**IV. ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ Երթևեկելի մասի կողքին տեղակայված S(T).1 ցանկացած կատարման և S(T).2 լուսացույցները կրկնում են:**
Կրկնող լուսացույցը տեղակայվում է խաչմերուկում կամ անմիջապես դրանից հետո՝ հաշվի առնելով վարորդի կողմից լուսացույցի ազդանշանի տեսանելիությունը:
Բաժանարար գոտու, ուղղորդ կղզյակների կամ անվտանգության կղզյակների առկայության դեպքում կրկնող լուսացույցները (բացի S(T).1.ա, «դեպի աջ» սլաքով S(T).2) տեղակայվում են խաչմերուկում, դրանից **հետո՝ երթևեկելի մասերի միջև կամ խաչմերուկից ձախ: Ընդ որում, խաչմերուկից հետո ձախ կողմում**

կրկնող լուսացույցի տեղակայումը թույլատրվում է, եթե հանդիպակաց երթևեկության երթևեկելի մասն ունի երեք և ավելի երթևեկության գոտի, իսկ յուրաքանչյուր գոտիով երթևեկության ինտենսիվությունը կազմում է ոչ ավելի, քան 500 միավոր/ժ:
S(T).1.ա և S(T).2 («դեպի աջ» սլաքով) լուսացույցները կրկնում են, եթե դեպի աջ շրջադարձն իրականացվում է երկու և ավելի շարքով: Կրկնող լուսացույցները տեղակայվում են խաչմերուկում կամ անմիջապես դրանից հետո՝ երթևեկելի մասերի միջև կամ աջ կողմում: Լուսացույցն աջ կողմում տեղակայելու դեպքում համընթաց ուղղությամբ գոտիների թիվը պետք է լինի երեքից ոչ ավելի, իսկ յուրաքանչյուր գոտիով երթևեկության ինտենսիվությունը կազմում է ոչ ավելի, քան 500 միավոր/ժ:
Բաժանարար գոտիների, բարձրացված ուղղորդ կղզյակների կամ անվտանգության կղզյակների բացակայության դեպքում՝ կրկնող լուսացույցները տեղակայվում են անմիջապես խաչմերուկից հետո՝ S(T).1.ա կամ S(T).2 («դեպի աջ» սլաքով)՝ աջ կողմում, մյուսները՝ ձախ կողմում, եթե տվյալ ուղղությամբ գոտիների թիվը պակաս է երեքից, իսկ յուրաքանչյուր գոտիով երթևեկության ինտենսիվությունը կազմում է ոչ ավելի, քան 500 միավոր/ժ (նկար N 1-ա):
Սույն կետում նշված պայմանները չապահովելու դեպքում լուսացույցները (բացի ցանկացած կատարման S(T).3 լուսացույցներից) տեղակայվում են երթևեկելի մասի վրա (նկար N 1-բ):
Թույլատրվում է երթևեկելի մասի վրա տեղակայված լուսացույցները չկրկնել:
, V. ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄՆԵՐԸ S(T).1.ա, S(T).1.ձ և S(T).1.ած լուսացույցներով երթևեկությունը կարգավորելու դեպքում անթույլատրելի է ազդանշանների մշտական գործողության որևէ համակցություն (օրինակ, «կարմիր» ազդանշանը լրացուցիչ սեկցիայի ազդանշանի հետ) չի համապատասխանում ճանապարհային երթևեկության կանոններին և կարիք չկա տեղադրելու 8 հատ լուսացույց աջ թարթող զիջիր ճանապարհը նշանով:

Ինչպես նաև Ձեր կողմից հրապարակված տեխնիկական բնութագրով նշված պայմաններով Հայաստանում և ԵԱՏՄ-ում արտադրում է միայն Վարուժան Մկրտչյան Ա/Ձ-ն, ինչը հանդիսանում է գնումների մասին օրենքի խախտում (Հոդված 13-ի 5-րդ կետի համաձայն Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը):

Ուստի առաջարկում եմ հրավերով նախատեսված լուսացույցների փոխարեն տեղադրել Ռուսական արտադրության «Պրոմիշլենայա Տոչկա» գործարանի կողմից արտադրած, լիցենզավորված լուսացույցներ (Т.1.2п 1096*780*61մմ և П.1.2 665*390*61մմ): «Պրոմիշլենայա Տոչկա» գործարանի արտադրած լուսացույցներ որոնցով կահավորված են Ռուսաստանի դաշնության խոշոր քաղաքները ,Հայաստանում Երևան քաղաքի , Մարտունի քաղաքի և այլ քաղաքների խաչմերուկները: Ի տարբերություն Վարուժան Մկրտչյան Ա/Ձ -ի (որը տեղադրում է ամեն մի լուսացույցի համար առանձին բլոկ լուսացույցի սյան վրա ,որը ժամանկի ընթացքում պահանջում է լրացուցիչ սպասարկման և ֆինանսավորման կարիք) «Պրոմիշլենայա Տոչկա»-ի լուսացույցների համար տեղադրվում է 1 հատ կառավարման բլոկ որը ունի 16 ելք որից օգտագործվում է 8-ը ,իսկ մյուս 8-ը մնում է պահուստային, կառավարում է ամբողջ խաչմերուկը ավելի հուսալի ու անխափան ունի 15 տարվա երաշխիքային ժամկետ: Համապատասխանում է ԳՕՍՏ Ռ 52282-2004 , ԳՕՍՏ Ռ 52289-2004»:

2.3. Հաշվի առնելով <<ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի գրությամբ նշված հանգամանքները, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և դիմել ոլորտը կարգավորող լիազոր մարմնին՝ <<ԷԼԵԿՏՐՈՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ի գրությամբ նշված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար:

2.4. Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել լիազոր մարմնի պարզաբանումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ք. Ապարան Բաղրամյան 26 հասցեում, ժամը՝ 14:00-ին:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Ա.Կարապետյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Ի. Թադևոսյան
	_____	Ա .Միսակյան
	_____	Ս.Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար ՝	_____	Մ. Հայրապետյան